ottomanum", արտասանում է նա որպէս մեռելի վրայ հոգւոց։

Միանգամայն տարբեր տոնով գրուած մի այլ կարծիք մէջ կը բերեմ, որ համակ ցասում է։ Խօսողը Գօրբինին է, իտալական հիւպատոսը Տրապիզոնում 1915 թուին եւ ականատեսը այդտեղի հայութեան չարչարանքներին ու տարաղբութեան։ Նա նախ նկարագրում է հայ երեխաները կողովներով ծովը թափելու սարսռազդեցիկ տեսարանները, «արցունք, անէծք, յանկարծական խելագարութիւն, ինքնասպանութիւններ, հրդեհներ, փողոցներում, տներում, դաշտերում համազարկեր...հարիւրներով դիակներ փողոցներում», ապա շարունակում է.

«Երբ մի ամբողջ ամիս անդօր ականատես ես ամենօրեայ զարհուրանքի տեսարանների, ակամայ հարցնում ես՝ թէ արդեօ՞ք բնութեան բոլոր գազանները թիւրք կառավարութեան անդամներ չեն։ Եթէ ամէնքը դիտնային, ինչ ես դիտեմ, ինչ ես եմ տեսել իմ սեփական աչքերով, ինչ ես եմ լսել իմ ականջներով, ապա բոլոր քրիստոնեայ պետութիւնները եւ չեզոքները պիտի միանային Թիւրքերի դէմ կոչելով՝ «նզովուած»1)։

Տասն-տասներկու տարի է միայն անցել այն ժամանակից, երբ գրուած են վերոյիշեալ երկու վկայութիւնները։ Արդ՝ կարո՞ղ է մարդկային որեւէ տրամաբանութիւն առանց արտուրդի մէջ ընկնելու պնդել, թէ այդ կարճ ժամանակաշրջանում հնարաւոր է, որ անմեղ երեխաներ կողովներով ծովը թափող, հազարաւոր մարդ, կին, ծեր, երիտասարդ կենդանւոյն հողի տակ թաղող, եւ անապատների մէջ քարիւղով հազարաւոր պատանիներ վառող, կին, աղջիկ, մանուկ բռնաբարող, յօշոտող մի ժողովուրդ ու կառավարութիւն — հնարաւո՞ր է որ յանկարծ կերպարանափոխուի եւ Արեւմըտեան քաղաքակրթութեան բարձունքները սաւառնի։

Հնարաւո՞ր է այդ հրաշքը։

Մուստաֆա Քեմալ նոր Մովսէս մարդարէ՞ արդեօք, որի գաւազանը ամուլ ժայռից անմահական ջուր է հանել եւ իր ժողովուրդն իմաստացրել, թէ՞ Թիւրք ցեղը յանկարծ Ահարոնի գաւազանի պէս մի գիշերուան մէջ ծաղկեց ու պտուղ տուեց աստուածային հրամանով։ Աշխարհում հրաշքները վաղուց են դադարել. միայն Թիւրքիա՞ն է մնացել աստուածայայտնութեան երկիր։ Ո՛չ, հրաշք չկայ Թիւրքիայում, բայց դրա փոխարէն կայ մի առանձնայատուկ «յառաջադիմութիւն» զուտ Թիւրքական. դա իրար յաջորդող բեժիմների տակ — սուլթանութիւնից մինչեւ հանրապետութիւն — հպատակ ժողովուրդների ջարդն է, որ քանի գնում խորանում ու լայնանում է նոր ժամանակների, եւ եւրոպականացումի ճիգերի հետ։

Թւում է, թէ հին Թիւրքերը աւելի հոգի ու աստուած են ունեցել, քան նոր Թիւրքերը։ Այսպէս մի դար առաջ՝ 1815 թուին, Վիեննայի կոնդրեսին սերբերի բողոքարկու Մաթէօ Նենադովիչ վարդապետը Թիւրքական բարբարոսութեան զոհերի շատ համեստ թուեր է ներկայացնում. «Թիւրքերը, ասում է վարդապետը, ութ օր առաջ տասն եւ վեց սերբեր ցից են հանել Բայազնում եւ Դելիգրադում... Բելգրատի բանտում հարիւրի չափ բանտարկեալներ կան...փոքրոցի երկու կողմերում կան վաթսուն-եօթանասուն սերբեր ցցի հանուած։ Շատ տեղ, շարունակում է գանգատաւոր վարդապետը, Թիւրքերը գիւղացիներին կապում են դրան առջեւի կեռասենուն, ապա սկսում են կողոպուտն ու բռնաբարումները»1)։

Ճիշդ է, ցցերի վրայ անկուած եօթանասուն մարդկանց տեսարանը նողկալիօրէն զարհուրելի է, բայց վերջապէս եօթանասուն է։

Ի՞նչ «առաքինի» են եղել այն ժամանակի Թիւրքերը։ Այդ թուականից հինգ-տասն տարի յետոյ՝ Ցունաստանի սարսափների օրերին կոտորածը հասնում է արդէն հազարների. կէս դար յետոյ՝ 1870-ական թուականներին բուլգարների ջարդը տասնեակ հազարներով է. քսան տարի յետոյ՝ 1895-1896 թուերին Հայաստանում Թիւրք գազանութեան զոհերի թիւը հարիւր հազարներից անց է։ Եւ երբ իշխանու-

1) L'Oeuvre des Ecoles d'Orient, յուլիս-օգոստոս 1915, երես 420 (L'Apfaire de Mossoul, prof. Lefur, Paris)։

1) Jacques Ancel, Question d'Orient, երես 63։